«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1119-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2025 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի N 1911-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ և 37-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» N 1911-Ն որոշման 6-րդ հավելվածի «IV. Բերդի տարածաշրջան» գլխում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) 4-րդ կետում «30» թիվը փոխարինել «60» թվով.

2) 4-րդ կետից հետո լրացնել 4.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1 «Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունն իրականացնում է Բերդի տարածաշրջանում տեղակայված Պաշտպանության նախարարության համակարգի զորամասերի և այլ ստորաբաժանումների զինծառայողների, նրանց հավասարեցված անձանց և նրանց ընտանիքների

անդամների՝ օրենքով սահմանված շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման, ինչպես նաև զորամասերի և այլ ստորաբաժանումների բժշկական ուղեկցման ու բուժկանխարգելիչ միջոցառումների ապահովման գործառույթներ՝ այդ գործընթացում համագործակցելով Պաշտպանության նախարարության համակարգի ռազմաբժշկական ապահովման ոլորտի խնդիրներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանման, Պաշտպանության նախարարության ենթակայությամբ գործող հոսպիտալների և տարածաշրջանում տեղակայված Պաշտպանության նախարարության զորամասերի և այլ ստորաբաժանումների հետ։».

3) 4-րդ կետին հաջորդող աղյուսակի երկրորդ սյունակում «9», «8» և «30» թվերը համապատասխանաբար փոխարինել «24», «23» և «60» թվերով։

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության «Բերդի զինվորական հոսպիտալ» պետական հիմնարկ ստեղծելու մասին» N 416-Ա որոշումը։

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել Պաշտպանության նախարարության «Բերդի զինվորական հոսպիտալ» պետական հիմնարկի գործունեության դադարեցումը.

2) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հետ համատեղ ապահովել «Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացումը։

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

Հայաստանի Հանրապետության

վարչապետ Ն. Փաշինյան